ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
А Р М А В И Р А

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<<-------->> ----------------- 2016թ. թիվ ----------

***<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ<br><<ՀԵՏՔ>> ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ<br>ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ***

Ի պատասխան Ձեր 2016 թվականի մարտի 11-ի գրության՝ հայտնվում է, որ

1. Արմավիր քաղաքի նախկին պահածոների գործարանի նախկին հանրակացարանում բնակվող քաղաքացիները նոր մասնաշենք են տեղափոխվել վթարային շենքերից 2013 թվականի ընթացքում:
2. Տեղափոխվել են վթարային շենքերում գրանցված և հաշվառված բոլոր ընտանիքները:
3. Ներկայումս նոր շենքի բնակիչների հետ կնքվում են իրենց կողմից զբաղեցրած բնակարանների նվիրատվության պայմանագրեր:
4. Մինչև այս պահը կնքվել է թվով 7 պայմանագիր: Գործընթացը շարունակվում է: Նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման համար նախատեսված տուրքերի վճարումներն իրականացվում են քաղաքացիների կողմից:
5. Բնակարանների հատկացումներն իրականացվել են հաշվի առնելով բնակիչների փաստացի զբաղեցրած տարածքի չափերը, ընտանիքի անդամնեի թվաքանակը և ելնելով այն հանգամանքից, նոր մասնաշենքի վերակառուցման արդյունքում ձևավորվել են մեկ, երկու և երեքսենյականոց բնակարաններ:

***ՄԱՐԶՊԵՏ՝***  ***Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

*Կատ.՝ Փ. Կարապետյան*
*Յու. Մանվելյան*